

7-րդ դասարան /առաջին փուլ/

Տարբերակ 1

1. Նշված թվերից ընտրեք այն թիվը, որը բաժանվում է 12-ի:

ա) 1122                      բ) 2344                      գ) 1164                      դ) 8888

2. Գտեք  $\left(13 - 9,5 : 3\frac{4}{5}\right) \cdot \frac{3}{7}$  արտահայտության արժեքը:

ա) 4,5                      բ) -24,5                      գ)  $\frac{75}{38}$                       դ)  $-\frac{75}{38}$

3. Գտեք 2016, 64, 9, 7 թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը:

ա) 2016                      բ) 64                      գ) 1                      դ) այլ պատասխան

4.  $640 \text{ դմ}^2$  –ն  $10 \text{ մ}^2$ -ու  $n$  ր տոկոսն է:

ա) 36                      բ) 50                      գ) 32                      դ) 64

5. Արամի ունեցած գրքերի քանակը 150-ից շատ է և 200-ից քիչ: Հայտնի է, որ Արամի գրքերի քանակի 20%-ը մաթեմատիկայի են, իսկ  $\frac{1}{7}$  -ը՝ ֆիզիկայի: Գտեք Արամի գրքերի քանակը:

ա) 175                      բ) 170                      գ) 185                      դ) այլ պատասխան

6. Հենվելով ձախ ոտքի վրա կենդուրուն թռչում է ճիշտ 2մ, հենվելով աջ ոտքի վրա՝ ճիշտ 4մ, իսկ հենվելով երկու ոտքի վրա՝ ճիշտ 7մ: Ամենաքիչը քանի՞ թռիչք պետք է կատարի կենդուրուն, որպեսզի անցնի ուղիղ 1000մ:

ա) 144                      բ) 145                      գ) 143                      դ) այլ պատասխան

7. Բոլոր բնական թվերը ներկել են երեք գույնով: 1-ը՝ կարմիր, 2-ը՝ կապույտ, 3-ը՝ կանաչ, 4-ը՝ կարմիր, 5-ը կապույտ, 6-ը կանաչ և այդպես շարունակ: Ո՞ր գույնով է ներկված կարմիր և կապույտ թվերի գումարը:

ա) միայն կապույտ                      բ) կարմիր կամ կանաչ

գ) միայն կարմիր                      դ) այլ պատասխան

8. Նարինջներով լի արկղը կշռում է 35 կգ: Երբ վաճառեցին նարինջների կեսը, արկղի կշիռը դարձավ 21 կգ: Ինչքա՞ն է կշռում դատարկ արկղը:

ա) 7                      բ) 14                      գ) 5                      դ) այլ պատասխան

9. 10-ի չբաժանվող երկնիշ թիվը բաժանել են այդ երկնիշ թվի վերջին թվանշանի վրա: Գտեք ստացված քանորդներից հնարավոր մեծագույնի արժեքը:

ա) 41                      բ) 11                      գ) 81                      դ) այլ պատասխան

10. Նշված թվերից ո՞րը կարող է լինել չորս հաջորդական բնական թվերի արտադրյալի վերջին երեք թվանշանները:

ա) 116                      բ) 117                      գ) 126                      դ) 160

11. 2016, 2017, ..., 2100 թվերից գտեք այն թվերի քանակը, որոնց վերջին թվանշանը հավասար է մյուս երեք թվանշանների գումարին:

ա) 12                      բ) 4                      գ) 5                      դ) այլ պատասխան

12. Գտեք 25-ի բաժանվող այն քառանիշ թվերի քանակը, որի վերջին թվանշանը հավասար է մյուս երեք թվանշանների գումարին:

ա) 5                      բ) 12                      գ) 3                      դ) 4

13. A և B գյուղերից միաժամանակ միմյանց հանդեպ դուրս եկան երկու հեծանվորդ և հանդիպեցին 36 ընկերացու: Առանց կանգ առելու առաջին հեծանվորդը հասավ B և ամիջապես հետ վերադարձավ, իսկ երկրորդ հեծանվորդը մի փոքր ուշ հասավ A և ամիջապես հետ վերադարձավ: Հանդիպումից հետո քանի՞ ընկերացու անց հեծանվորդները կհանդիպեն երկրորդ անգամ:

Պատ.՝

14. Գտնել 756-ի բոլոր պարզ բաժանարարների քանակը:

Պատ.՝

15. Գտեք այն երկնիշ թվերի քանակը, որոնց թվանշանների գումարը կենտ է:

Պատ.՝

16. Բնական թիվը կանվանենք հետաքրքիր, եթե այն մեծ է իր վերջին թվանշանից 6 անգամ: Գտեք հետաքրքիր թվերի քանակը:

Պատ.՝

17. Քանի՞ զրոյով է վերջանում 2016-ից 2027 բնական թվերի արտադրյալը:

Պատ.՝

18. Գտեք այն հնգանիշ թվերի քանակը, որոնք ձախից աջ և աջից ձախ կարդացվում են նույն ձևով (օրինակ՝ 54345, 17071):

Պատ.՝

19. Գտեք  $237 * 4 *$  տեսքի վեցանիշ թվերի քանակը, որոնք բաժանվում են 18-ի:

Պատ.՝

20. Շրջանագծի՝ վրա վերցրել են 7 կետ, որոնցից երկուսը ներկել են կարմիր գույնով, երկուսը՝ կապույտ գույնով, իսկ երեքը՝ կանաչ գույնով: Գտեք այն հատվածների քանակը, որոնց ծայրակետերը ներկված են տարբեր գույներով:

Պատ.՝